ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԻԿԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

2314, Կոտայքի մարզ, Մարմարիկ համայնք» 1-ին փողոց 19/1

02.06. 2017թ. ԳՊ – 43

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Կ.ԳՈՒԼՈՅԱՆ

Հարգելի պարոն Գուլոյան

Ձեզ ենք ուղարկում ՀՀ Կոտայքի մարզի Մարմարիկ գյուղական համայնքի ղեկավարի 2017 թվականի որոշումները:

Առդիր՝23 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կատ. Գ. Սաատրյան
Հեռ. 077-37-39-54

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

ՈՐՈՇՈՒՄ

16 հունվար 2017թ. թիվ 1

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԿԱՌԼԵՆ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ ԵՎ ԱԼՎԻԹԱ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 0.36 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ 64.0 Ք/Մ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 7-րդ կետով, *որոշում եմ*

Քաղաքացիներ Կառլեն Շահինյանին և Ալվիթա Գալստյանին պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 599706) 64.0 ք/մ բնակելի տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզի Մարմարիկ համայնքի 4-րդ փողոց տուն 21:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

## ՈՐՈՇՈՒՄ

20 հունվար 2017թ. N 2
գ. Մարմարիկ

## ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի» 20-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 2017 թվականի ապրիլի 2-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունները անցկացնելու համար Մարմարիկ համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղերը`

1) Հանդիսությունների սրահի շենք/ գ. Մարմարիկ 1-ին փողոց 2-րդ շենք/ /5 ք.մ./
2) Կարի արտադրամասի շենք /գ. Մարմարիկ 1-ին փողոց 18-րդ շենք/ /5 ք.մ./

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible]. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

ՈՐՈՇՈՒՄ

20 հունվար 2017 թ. թիվ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ ՄՀԵՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ, ԲԱՂԴԱՍԱՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՐԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարմարիկ համայնքի բնակիչներ՝ Մհեր Կիրակոսյանի, Բաղդասար Բաղդասարյանի և Կարինե Հակոբյանի դիմումները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջով. *որոշում եմ*՝

Մարմարիկ համայնքի բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից դուրս գրել 150.0 հազար ( հարյուր հիսուն հազար ) դրամ և համայնքի բնակիչներ՝ Մհեր Կիրակոսյանին, Բաղդասար Բաղդասարյանին և Կարինե Հակոբյանին հատկացնել նյութական օգնություն՝

1. Մհեր Կիրակոսյան - 50.0 հազ (հիսուն հազար) դրամ
2. Բաղդասար Բաղդասարյան -50.0 հազ (հիսուն հազար) դրամ
3. Կարինե Հակոբյան -50.0 հազ (հիսուն հազար) դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փողոց 19/1, 2314

ՈՐՈՇՈՒՄ
25 հունվար 2017թ. N 4

### ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի» 16-րդ հոդվածի 1-ին մասիպահանջով.

Որոշում եմ՝

Մարմարիկ համայնքի ընտրական տեղամասային կենտրոն սահմանել՝ Մարմարիկ համայնքի միջնակարգ դպրոցի շենքում (4-րդ փող. 2-րդ նրբ. շենք 14):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ [illegible]ԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող 19/1, 2314

## ՈՐՈՇՈՒՄ

26 Հունվարի 2017թ. թիվ 5

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՌԱՖԻԿ ԵՎ ԹԵՐԵԶԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 0,33 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ 64.0 ՔՄ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 7-րդ կետով, *որոշում եմ*

Քաղաքացիներ Ռաֆիկ և Թերեզա Կարապետյաններին պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 0321002) 64.0 ք/մ անասնաշենքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզի Մարմարիկ համայնքի 6-րդ փողոց տուն 4:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

# ՈՐՈՇՈՒՄ

02 մարտ 2017 թ. թիվ 6

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ ԱՐԹՈՒՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ ՆՈԴԱՐ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարմարիկ համայնքի բնակիչներ՝ Արթուրիկ Պետրոսյանի և Նոդար Միրզոյանի դիմումները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջով. *որոշում եմ՝*

Մարմարիկ համայնքի բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից դուրս գրել 100,0 հազար ( հարյուր հազար ) դրամ և համայնքի բնակիչներ՝ Արթուրիկ Պետրոսյանին և Նոդար Միրզոյանին հատկացնել նյութական օգնություն՝

1. Արթուրիկ Պետրոսյան - 50.0 հազ (հիսուն հազար) դրամ
2. Նոդար Միրզոյան - 50.0 հազ (հիսուն հազար) դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

### ՈՐՈՇՈՒՄ

30 Մայիս 2017թ. թիվ 7

### ԾԱԾԿԱԳԻՐ 07-044-0003-0022 ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ սահմանված կարգի 7-րդ կետով. *որոշում եմ*

Ծածկագիր 07-044-0003-0022 հողամասին (սեփականության իրավունքի գրանցման վկայական 0321011) տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզի Մարմարիկ համայնքի 4-րդ փողոց 2-րդ նրբանցք տուն 4:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ... ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտ 2017 թվականի N 8
գ.Մարմարիկ

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով անհատ ձեռներեց Աշոտ Մեխոյանի հայտը՝ *որոշում եմ*

1. Անհատ ձեռներեց Աշոտ Մեխոյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն 2017թվականի 2-րդ եռամսյակի համար:
2. Համաձայն համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 39-ի թիվ 29 -Ն որոշման մուծել տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտ 2017 թվականի N 9
գ.Մարմարիկ

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով անհատ ձեռներեց՝ Պետրոս Պետրոսյանի հայտը՝ ***որոշում եմ***

1. Անհատ ձեռներեց՝ Պետրոս Պետրոսյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն 2017թվականի 2-րդ եռամսյակի համար:
2. Համաձայն համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 29 -Ն որոշման մուծել տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ... ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 մարտ 2017 թվականի N 10
գ.Մարմարիկ

### ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով անհատ ձեռներեց` Վրեժ Պետրոսյանի հայտը` *որոշում եմ*

1. Անհատ ձեռներեց` Վրեժ Պետրոսյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն 2017թվականի 2-րդ եռամսյակի համար:
2. Համաձայն համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 29 -Ն որոշման մուծել տեղական տուրք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

# ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլ 2017 թ. թիվ 11

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱԲՐԱՀԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարմարիկ համայնքի բնակիչ՝ Աբրահամ Ղազարյանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջով. *որոշում եմ*՝

Մարմարիկ համայնքի բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից դուրս գրել 30.0 հազար ( երեսուն հազար ) դրամ և համայնքի բնակիչ՝ Աբրահամ Ղազարյանին հատկացնել նյութական օգնություն՝

1. Աբրահամ Ղազարյան 30.0 հազ (երեսուն հազար) դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ [illegible]. ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

## ՈՐՈՇՈՒՄ

25 ապրիլ 2017 թ. թիվ 12

### ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ ԴՈՆԱՐԱ ՄԵԼՈՅԱՆԻՆ, ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, ԼՈՒՍԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ, ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՏՈՆՈՅԱՆԻՆ ԵՎ ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարմարիկ համայնքի բնակիչներ՝ Դոնարա Մելոյանի, Անահիտ Հարությունյանի, Լուսինե Հակոբյանի, Հարություն Տոնոյանի և Սուրեն Գևորգյանի դիմումները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջով. *որոշում եմ՝*

Մարմարիկ համայնքի բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից դուրս գրել 250,0 հազար (երկու հարյուր հիսուն հազար ) դրամ և համայնքի բնակիչներ՝ Դոնարա Մելոյանին, Անահիտ Հարությունյանին, Լուսինե Հակոբյանին, Հարություն Տոնոյանին և Սուրեն Գևորգյանին հատկացնել նյութական օգնություն՝

1. Դոնարա Մելոյան - 50.0 հազ (հիսուն հազար) դրամ
2. Անահիտ Հարությունյան - 50.0 հազ (հիսուն հազար) դրամ
3. Լուսինե Հակոբյան - 50.0 հազ (հիսուն հազար) դրամ
4. Հարություն Տոնոյան - 50.0 հազ (հիսուն հազար) դրամ
5. Սուրեն Գևորգյան - 50.0 հազ (հիսուն հազար) դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 մայիս 2017թվականի N 13

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 30-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարի 2017 թվականի մայիսի 17-ի N01/18.1/2963-17 հանձնարարականը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2017 թվականի մայիսի 18-ի N01/15.2/2064-17 գրությունը՝ ո ր ո շ ու մ եմ.

1. 2017 թվականի մայիսի 27-ին կազմակերպվող հանրապետական շաբաթօրյակը Մարմարիկ համայնքում արդյունավետ իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով.

1)Աշխատանքային խմբի ղեկավար Ա. Պետրոսյան / համայնքի ղեկավար/
2) անդամ Մ. Հարությունյան / համայնքի ղեկավարի տեղակալ/
3) անդամ Հ. Տոնոյան / համայանքի ղեկավարի խորհրդական/
4) անդամ Ռ. Բարսեղյան/ ավագանու անդամ/
5) անդամ Ն. Արզումանյան միջնակարգ դպրոցի տնօրեն

2. Աշխատանքային խմբին՝ ապահովել համայնքապետարանի աշխատակազմի, համայնքապետարանի ենթակայության կազմակերպությունների աշխատակիցների, ուսումնական հաստատությունների, մասնավոր ընկերությունների և համայնքի բնակչության ակտիվ մասնակցությունը համայնքի վարչական տարածքի մաքրման և բարեկարգման աշխատանքներին:
3. Ապահովել աղբահավաքման և սանիտարական մաքրման համար անհրաժեշտ տեխնիկայի , այդ թվում բեռնատար մեքենաների ներգրավածությունը հավաքված աղբը ժամանակին և պատշաճ կերպով տեղափոխվի աղբավայր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկի համայնք, 1-ին փող., 19/1, 2314

# ՈՐՈՇՈՒՄ

29 Մայիս 2017 թ. թիվ 14

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի ապրիլի 8-ի թիվ 280-Ա հրամանը՝ *որոշում եմ.*

Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մարմարիկի համայնքապետարանի պաշտոնական կայքի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված
Մարմարիկ համայնքի ղեկավարի
2017 թվականի մայիսի 29-ի N 14 որոշման
Համայնքի ղեկավար՝ Ա. Պետրոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն իրավական ակտի նպատակն է սահմանել ՀՀԿոտայքի մարզի Մարմարիկի համայնքապետարանի համացանցային պաշտոնական կայքերի (այսուհետ՝ պաշտոնական կայք) վարման կարգը:
2. Պաշտոնական կայքի դոմենային անունն էmarmarik.am:
3. ՀՀ կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքապետարանի պաշտոնական կայքը կառավարում է Մարմարիկի համայնքապետարանի աշխատակազմը:
4. Պաշտոնական կայքի վարման համակարգող է հանդիսանում համայնքապետարանի աշխատակազմի երկրորդ մասնագետը.
5. Պաշտոնական կայքում պատրաստ գրանցման են ենթակա օրենսդրությամբ սահմանված իրավական ակտերը, տեղեկությունները և նյութերը:
6. Համացանցում պաշտոնական կայքի հասանելիությունը, օրվա մեջ 24-ժամյա, շաբաթական 7 օր:

## II. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

7. Պաշտոնական կայքը նախատեսված է համայնքապետարանի գործունեության մասին տեղեկատվություն տրամադրելու համար:
8. Տեղական ինքնակառավարման մարմինները սահմանում են պաշտոնական կայքում տեղադրվող տեղեկատվության բովանդակությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կարգին համապատասխան:
9. Պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվությունը պետք է լինի արդիական, հավաստի և ամբողջական:
10. Պաշտոնական կայքում տեղեկատվության հասանելիության ապահովման, արդիականացման և տեղադրման գործընթացի կազմակերպման նպատակով, համայնքի ղեկավարի իրավական ակտով՝ որպես պատասխանատու հանդես է գալիս կառուցվածքային ստորաբաժանումը և

(կամ) կոնկրետ պաշտոնատար անձը՝ պաշտոնի անձնագրին կամ գործատուի հետ կնքված աշխատանքային պայմանագրին համապատասխան:

11. Պաշտոնական կայքում պետք է տեղադրվեն առնվազն՝

համայնքապետարանի

ա. պատմությունը,

բ. ընթացիկ գործունեության մասին տեղեկատվությունը,

գ. կառուցվածքը (հաստիքացուցակ, աշխատակիցների ցուցակ,

աշխատակիցների կոնտակտային տվյալներ) և գրաֆիկական պատկերը,

դ. հիմնական խնդիրներն ու գործառույթները,

ե. կառուցվածքային և (կամ) առանձնացված ստորաբաժանումների, իր ենթակայության մարմինների խնդիրներն ու գործառույթները, գտնվելու վայրերը, աշխատակազմի կոնտակտային տվյալները,

1) այն նորմատիվ ակտերը կամ դրանց հղումները, որոնցով կարգավորվում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը.
2) տեղեկություններ իրականացվող/իրականացված ծրագրերի մասին (ծրագրերի ցանկը, տեղեկություններ ծրագրերի իրականացման շրջանակներում անցկացվող միջոցառումների մասին, հաշվետվություններ).
3) Համայնքապետարանում իրականացված ստուգումների, ուսումնասիրությունների, աուդիտի մասին տեղեկատվություն.
4) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող իրավական ակտերի նախագծերը և որոշումները (համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներ, աշխատակազմի քարտուղարի հրամաններ).
5) համայնքի ղեկավարի, ավագանու ուղերձները, ավագանու կանոնակարգը.
6) համայնքապետարանի գործունեության վերաբերյալ հաշվետվություններ, զեկույցներ և այլ տեղեկատվություն.
7) տեղական ինքնակառավարման մարմին ներկայացվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված դիմումների, տեղեկատվություն ստանալու մասին հարցումների և այլ փաստաթղթերի օրինակելի ձևերը, դրանց լրացման վերաբերյալ ցուցումները, ինչպես նաև պաշտոնատար անձանց գործողությունների (անգործությունների) վարչական և քրեական կարգով վիճարկման կարգը.

8) թափուր պաշտոն զբաղեցնելու մասին տեղեկությունները՝ թափուր պաշտոնների ցանկը, ներկայացվող պահանջները, աշխատանքի ընդունման կարգը, մրցույթի արդյունքները և դրանց բողոքարկման կարգը կամ հղում համապատասխան մարմնի պաշտոնական կայքին.
9) պաշտոնական միջոցառումների մասին տեղեկությունները, որոնք կազմակերպվում են համայնքապետարանի կողմից (ավագանու նիստեր, համայնքի ղեկավարի մոտ խորհրդակցություններ և այլն).
10) համայնքի, համայնքապետարանի մասին ԶԼՄ-ներում հրապարակումները կամ դրանց հղումները.
11) համայնքապետարանին կամ դրանց պաշտոնատար անձանց տրված մրցանակներն ու շնորհակալագրերը.
12) համայնքի ղեկավարի, ավագանու անդամների անունները, ազգանունները, կենսագրությունը, կոնտակտային տվյալները.
13) համայնքի զարգացման ծրագրերը.
14) տեղական տուրքի և վճարների դրույքաչափերը.
15) համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը, օրը, ժամը և վայրը.
16) համայնքապետարանի կողմից մատուցվող ծառայությունների (այդ թվում առցանց), ընթացակարգերի նկարագրություն, դրանց վերաբերյալ պարզաբանելու իրավասություն ունեցող անձի կոնտակտային տվյալները.
17) հղումներ պետական մարմինների, Հայաստանի Հանրապետության Նախագահի, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի, Հայաստանի Հանրապետության կառավարության, համապատասխան մարզպետարանի և, առկայության դեպքում, նաև իր ենթակայության մարմինների պաշտոնական կայքերին.
18) համայնքապետարանի կոնտակտային տվյալները՝ փոստի հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, ինտերնետային կայքի հասցեն, հասցեի քարտեզային պատկերը, հեռախոսահամարները, ֆաքսը.
19) համայնքապետարանի բյուջեի եկամուտների և ծախսերի պլանը, եկամուտների և ծախսերի կատարողականները, բյուջեի մուտքերը.
20) համայնքներում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի, շենքերի և շինությունների, տրանսպորտային միջոցների մասին տեղեկատվություն.
21) համայնքներում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի աճուրդային կարգով օտարման և մրցութային կարգով վարձակալության կամ կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ հայտարարությունները՝ տեքստային և գրաֆիկական տեղեկություններով փաթեթը.

23)գնումների մասին հայտարարությունները.

22) համայնքում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվությունը.
23) տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների հետ կապված տեղեկատվությունը (համայնքի ղեկավարի, ավագանու անդամի թեկնածուները, ընտրատեղամասերը, ընտրացուցակներ, ընտրությունների արդյունքներ և այլն).
24) ընտանեկան նպաստ կամ հրատապ օգնություն ստացող ընտանիքների ցուցակներ.
25) տեսաձայնային նյութեր և նկարներ.
26) առցանց հարցումներ.

12. Սույն հավելվածի 9-րդ կետով սահմանված տեղեկությունները կայքում չեն հրապարակվում, եթե դրանք՝

1) պարունակում են պետական, ծառայողական, բանկային, առևտրային գաղտնիք.

2) խախտում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիությունը, այդ թվում՝ նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը.

3) պարունակում են հրապարակման ոչ ենթակա նախնական քննության տվյալներ.

4) բացահայտում են մասնագիտական գործունեությամբ պայմանավորված մատչելիության սահմանափակում պահանջող տվյալներ (բժշկական, նոտարական, փաստաբանական գաղտնիք).

5) խախտում են հեղինակային իրավունքը և (կամ) հարակից իրավունքները:

13. Չի թույլատրվում պաշտոնական կայքում տեղադրել գովազդային բնույթի տեղեկատվություն՝ բացառությամբ սոցիալական գովազդի:

14. Բացի սույն հավելվածի 9-րդ կետով սահմանված տեղեկություններից՝ պաշտոնական կայքում կարող է տեղադրվել այլ լրացուցիչ տեղեկություն:

15. Պաշտոնական կայքում տեղադրվող տեղեկատվությունը հրապարակվում է պարտադիր հայերենով, իսկ ռուսերենով, անգլերենով և այլ լեզուներով՝ ըստ հնարավորության:

16. Պաշտոնական կայքում այլ լեզուներով առկա տեղեկատվությունը պետք է համապատասխանի հայերենով ներկայացված տարբերակին:

17. Պաշտոնական կայքում տեղադրված նյութերը պետք է պարունակեն հղումներ տեղեկատվության աղբյուրներին, հակառակ դեպքում դրանք կհամարվեն տվյալ մարմնի պաշտոնական տեղեկատվություն:

## III. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

18. Պաշտոնական կայքի գործունեության կազմակերպմանը մասնակցում են հետևյալ սուբյեկտները՝

1) տեղեկատվության բովանդակության պատասխանատուներ.

2) տեղեկատվություն տրամադրողներ.

3) կայքի ադմինիստրատոր (ադմինիստրատորներ):

19. Տեղեկատվության բովանդակության պատասխանատուները համայնքային ծառայողներ կամ պայմանագրային աշխատողներ են:
20. Տեղեկատվության բովանդակության պատասխանատուները պաշտոնական կայքում տեղադրելու համար հավաքագրում, մշակում, տեղադրում և հեռացնում են նյութերը:
21. Համայնքապետարանը ապահովում է տեղեկատվական նյութերում ուղղագրական կանոնների պահպանումը, հեղինակային և հարակից իրավունքների ոլորտում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարումը:
22. Տեղեկատվություն տրամադրողները պաշտոնական կայքում տեղադրելու նպատակով ապահովում են իրենց ոլորտի գործունեությանն առնչվող հավաստի և թարմացված տեղեկատվության նախապատրաստումը և փոխանցումը տեղեկատվության բովանդակության պատասխանատուին / պատասխանատուներին/:

23. Կայքի ադմինիստրատորը նշանակվում է պաշտոնական կայքի գործունեության աշխատանքների համակարգման համար և իրականացնում է՝
    1) կայքում գրանցված համայնքապետարանի աշխատակիցների, այլ անձանց իրավասությունների տրամադրում և գրկում.
    2) կայքի աշխատանքի մշտադիտարկում.
    3) տեղեկատվության բովանդակության պատասխանատուներին կայքի շահագործման, անվտանգության ապահովման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում.
    4) կայքի տվյալների շտեմարանի պահուստային պատճենում և տեղեկատվության անվտանգության ապահովման աշխատանքներ
    5) կայքի անխափան աշխատանքի ապահովման տեխնիկական աշխատանքի իրականացում, այդ թվում՝ սերվերի ծրագրային և տեխնիկական սպասարկում, հակավիրուսային ծրագրերի թարմացում.

6) սերվերի աշխատանքի մշտադիտարկում.
7) կայքի գործունեության խափանման ժամանակ (ծրագրի կամ սարքավորման անսարքություն, կապուղիների խափանում, տվյալների շտեմարանների չթույլատրված մուտքի, տվյալների զանգվածների խափանում և այլն) անհապաղ տեղեկացնում է համայնքապետարանի ղեկավարությանը և կայքը սպասարկող մասնագիտացված կազմակերպությանը (եթե առկա է այդպիսի կազմակերպություն): Ձեռնարկվում են միջոցներ՝ տեղեկատվական ենթակառուցվածքի գործառնության նորմալ ռեժիմի վերականգնման համար:

## VI. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔՈՒՄ

24. Պաշտոնական կայքի տեղեկատվությունը բաժանվում է երեք մասի՝
    1) ընդհանուր հասանելի
    2) մասնագիտական հասանելի
    3) տեխնոլոգիական տեղեկատվություն:
25. Տեխնոլոգիական տեղեկատվությունը տեղեկատվական անվտանգության ղեկավարման համակարգին, ինչպես նաև տեղեկատվական համակարգի ղեկավարման և տեղեկատվության (հասցեների, ազգանունների, նույնականացման տվյալների, օգտագործողի և տեխնիկական անձնակազմի գաղտնաբառերի, համակարգի օբյեկտներին հասանելիության իրավունքների, տվյալների բազաների, համակարգերի և դրանց պաշտպանության ապահովման, աշխատանքային չափորոշիչների հավելվածների մասին տեղեկատվություն) մշակման եղանակի վերաբերյալ տվյալներն են:
26. Ընդհանուր հասանելիության տեղեկատվությունը պաշտոնական կայքում տեղադրված և տեխնոլոգիական տեղեկատվություն չհանդիսացող տվյալներն են:
27. Մասնագիտական հասանելիության տեղեկատվությունը հասանելի է միայն համայնքապետարանի աշխատակիցներին, ովքեր ունեն համապատասխան իրավասություններ.
28. Տեխնոլոգիական միջոցների կիրառումը պետք է ապահովի պաշտոնական կայքի տեղեկատվության պահուստային պատճենման և տվյալ տեղեկատվության վերականգնման գործընթացը:
29. Համայնքապետարանի կայքերի սերվերներում կիրառվող էլեկտրոնային ծառայությունների (բաց պորտերի) ցանցային հասանելիությունը պետք է սահմանափակվի:

## VII. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

30. Պաշտոնական կայքի ղեկավարման և գործունեության ապահովման ժամանակ համայնքապետարանը ղեկավարվում են տեղեկատվական անվտանգության ու

տեղեկատվության պահպանման ապահովման ոլորտի գործող օրենսդրությամբ և ազգային ստանդարտներով:

31. Համայնքապետարանը պաշտոնական կայքի ղեկավարման, տեղեկատվական-հեռահաղորդակցական ենթակառուցվածքների և տեղեկատվական համակարգերի շահագործման ժամանակ պարտավոր է ապահովել քաղաքացիների անհատական տվյալների գաղտնիության իրավունքը:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՐԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

# ՈՐՈՇՈՒՄ

29 մայիս 2017 թ. թիվ 15

## ՄԱՐՄԱՐԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏԱԿ ՖԵՈԴՈՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 158 հոդվածի և 159 հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1384-Ն որոշման հավելված 1-ի 15-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով անձնական դիմումը. *որոշում եմ*`

1.Մարմարիկի համայնքի ղեկավար Արտակ Ֆեոդորի Պետրոսյանին տրամադրել ամենամյա հերթական և լրացուցիչ 2017 թվականի արձակուրդ` 2017 թվականի մայիսի 29-ից մինչև հունիսի 29-ը ներառյալ:

2. Համայնքի ղեկավարի լիազորությունները վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ Մարտին Գրիշայի Հարությունյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ <u>ՄԱՐՄԱՐԻԿ</u> ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մարմարիկ համայնք, 1-ին փող. 19/1, 2314

## ՈՐՈՇՈՒՄ

29 մայիս 2017 թ. թիվ 16

## ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ՝ ՌՈՒԶԱՆՆԱ ՄԵԼՈՅԱՆԻՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարմարիկ համայնքի բնակիչ՝ Ռուզանա Մելոյանի դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջով. *որոշում եմ՝*

Մարմարիկ համայնքի բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ» ծրագրի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից դուրս գրել 40,0 հազար (քառասուն հազար ) դրամ և համայնքի բնակիչ՝ Ռուզաննա Մելոյանին հատկացնել նյութական օգնություն՝

1. Ռուզաննա Մելոյան - 40.0 հազ (քառասուն հազար) դրամ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ